

Մինչդեռ Դարգել Արագոնի թագաւորին կը ներկայանար, անդին՝ Լեոնի հաւատարիմ զինակիր եւ Հայոց թագաւորութեան մարաջախտը Սոհիէր Երուսաղէմէն Եւրոպա անցած՝ իր սիրելի վեհապետին փրկութեան համար դիմումներ կընէր Հոռմ, Ֆրանսա, Անգլիա եւ ուրիշ տեղեր (1), աղէխարչ բռտերով նկարագրելով քրիստոնեայ Հայաստանի ցաւալի վիճակն ու Լեոնի թշուառ կեանքը: Կղեմէս է պապին (1378-1394) կողմէ Տարրագոնայի (Սպանիա) արքեպիսկոպոսին զրկուած հետեւեալ թուղթն ապացոյց է Սոհիէրի դիմումներուն: Այս թուղթը կը կրէ 4 յուլիս 1381 թուականը, եւ զրկուած է Աւիննոնէ:

Թուղթ Կղեմէսի է առ արքեպիսկոպոսն Տարրագոնայի (2)

Վերջին ատեններս ոչ առանց դառնութեան սրտի լսեցինք՝ հաղորդելով մեզի սիրեցեալ որդին աղնուազարմ Սոհերիս Սարտեան, կոմսն Կոսիկոսի, թէ քիչ ժամանակ յառաջ Բաբելոնի ամբարշտագոյն սուլտանն մեծ բազմութեամբ Սարակինոսաց ասպատակելով մտած է Հայոց թագաւորութեան երկիրներուն մէջ անագորոյն անգթութեամբ, եւ թէ նոյն կողմերուն քաղաքները՝ բերդերն ու գիւղերը սաստիկ կոտորածով քրիստոնէից առած, այրած ու կործանած է. դարձեալ բազմաթիւ քրիստոնեաներ՝ որոնք մերժած էին կաթոլիկեայ հաւատքն ուրանալ՝ զանազան տանջանքներով չարչարած է, երկրագործներն

(1) Martene & Durand, *Amplissima Collectio*, fis. 6, սիւնակ 318, այսպէս կը գրէ Սոհիէրի դիմումներու մասին, առանց յիշատակելու սակայն Սոհիէրի անունը. « Այս ժամանակները՝ հայ զինուոր մը ֆրիսոնեայ բազաւորներուն եւ իբխաններուն կը տեսնուէր Հայոց ֆրիսոնեայ բազաւորին, բազուխին, իրենց գաւակներուն ու մեծամեծներուն՝ Եգիպտոսի սուլտանին կողմէ գերի բռնուելուն վրայ, եւ Հայոց բազաւորութեան կործանուիլն ու Յունաստանի բնակչի գրկուիլը կողբար: Պէտ է խոստովանիլ, որ այս անձը բազաւորին ազատութեան համար ո՛չ ոսկի, ո՛չ արծաթ եւ ոչ ո՛ր եւ է նուէր կուգէր, այլ մի միայն ֆրիսոնեայ իբխանութիւններու աղաչանքն ու պաղատանքը: Արդ Հռոմայեցիներու, Ֆրանսացիներու եւ Անգլիացիներու բազաւորներն ու միւս իբխաններէն շատերը նստակներ գրեցին Եգիպտոսի սուլտանին, խնդրելով նոյն (Հայոց) բազաւորին ազատ արձակումը գերութենէ, որուն սակ կը հեծէր: »

(2) Բնագիրը տես գրքիս վերջը՝ *Document VI*.